ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2026/155

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2026 թ. N 155

«ԳՅՈՒՄՐՈՒ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղ. Ղուկասյան 30**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2026 թվականի ապրիլի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 23 նոյեմբերի 2024 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 26 հունիսի 2025 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 20-22 հոկտեմբերի 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 29 դեկտեմբերի 2025 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 04 փետրվարի 2026 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Մհերյան** - Հայաստանի Եվրոպական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Հռիփսիմե Մարոնյան** - Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական Կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դասախոս, «Մարոնյան նորաձևության ստուդիո»-ի տնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
3. **Նաիրա Խաչատրյան** - Երևանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Անի Շահբազյան** - Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի անդամ, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Առկա է անհրաժեշտ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, իսկ պրակտիկ ոլորտից ներգրավված մասնագետների զգալի թիվը ուժեղացնում է կրթական ծրագրերի գործնական ուղղվածությունը: Միևնույն ժամանակ **որակավորումների արժանահավատ** շնորհման

տեսանկյունից առկա են մի շարք հստակեցման կարիք ունեցող խնդիրներ: Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերումը դեռևս չի գնահատվում միասնական և չափելի մոտեցումներով, ինչի հետևանքով ուսանողների կատարողական, ստեղծագործական, տեսական և գործնական կարողությունների առաջընթացը ամբողջությամբ տեսանելի չէ: Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման գործընթացները դեռևս պարբերական և տվյալահեն բնույթ չունեն. ծրագրերի վերանայումը հստակ չի կապվում ուսանողների առաջընթացի, շրջանավարտների հետագծի, գործատուների և գործընկեր կառույցների հետադարձ կապի, ինչպես նաև առանձին կրթական ծրագրերի պահանջարկի փոփոխությունների հետ: Բենչմարքինգը համակարգված չի կիրառվում, ինչի հետևանքով սահմանափակվում են կրթական ծրագրերի արդիականացման, ուսանողների և դասախոսների շարժունության, ինչպես նաև միջազգայնացման հնարավորությունների ընդլայնման գործընթացները:

II. Քոլեջի կառավարման համակարգը ապահովում է հաստատության ընթացիկ գործունեությունը և կրթական գործընթացի շարունակական իրականացումը: Առկա են կրթական ու կազմակերպական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, գործում են կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման մեխանիզմներ, իսկ դասախոսներն ու ուսանողները որոշակիորեն մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը: Միևնույն ժամանակ **արդյունքահեն կառավարման** հետագա ամրապնդման տեսանկյունից առկա են հստակեցման կարիք ունեցող խնդիրներ: Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը սահմանափակ է, արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներում թույլ է արտահայտված, իսկ պլանավորման արդյունավետությունը չի գնահատվում չափելի ցուցիչների հիման վրա: Մշտադիտարկման մեխանիզմները լիարժեք չեն գործում, հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը, իսկ քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համակարգված ուսումնասիրությունը դեռևս չի դարձել որոշումների կայացման հիմք: Կառավարումն ու վարչարարությունը անհրաժեշտ է ավելի հստակ կապել որակի կառավարման շրջափուլի հետ՝ պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում տրամաբանությամբ:

III. Քոլեջին նպատակահարմար է զարգացման հաջորդ փուլում կենտրոնանալ իր ձևավորված մասնագիտական, մշակութային և գործընկերային ներուժի առավել համակարգված օգտագործման վրա՝ ամրապնդելով Շիրակի մարզում արվեստի մասնագիտական կրթության կենտրոնի իր դերը: Այդ նպատակով անհրաժեշտ է

- կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման համար սահմանել չափելի ցուցիչներ՝ ուսանողների առաջընթացի, ավարտական աշխատանքների որակի, մասնագիտական զբաղվածության, կրթության շարունակության և գործընկեր կառույցների հետադարձ կապի հիման վրա,
- պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների ներուժը օգտագործել կրթական ծրագրերի վերանայման, գնահատման չափանիշների մշակման, վարպետաց դասերի և փորձի փոխանցման նպատակով,
- ստեղծագործական և կատարողական գործունեությունը կապել հետազոտական ու վերլուծական բաղադրիչների հետ՝ երաժշտական ժառանգության ուսումնասիրության, կատարողական հմտությունների վերլուծության, դիզայն նախագծերի հիմնավորման և ուսանողների ստեղծագործական աշխատանքների գնահատման միջոցով,

- արտաքին կապերն ու մշակութային համագործակցությունները ծառայեցնել ոչ միայն միջոցառումների և պրակտիկայի կազմակերպմանը, այլև կրթական ծրագրերի բարելավմանը, ուսանողների մասնագիտական առաջընթացի գնահատմանը, վարպետաց դասերի և փոխադարձ այցերի կազմակերպմանը,
- որակի ապահովման գործընթացները դարձնել կառավարման իրական գործիք՝ ապահովելով տվյալների պարբերական հավաքագրում, վերլուծություն և դրանց հիման վրա կրթական ծրագրերի, դասախոսական կազմի, ռեսուրսների և արտաքին կապերի բարելավման որոշումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարությունները ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՔՈԼԵՋ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2026 թ., ապրիլի 10